

Այնոք որ ըզկռին արին՝ շատ արին ի վայր թափեցին,
 'ի ի յայն արենէ ցողին շունչ տըլաւ անկած մեռելին.
 Ծեր մ'այլ բարեխօս բերին, որ եպագ գերես մեռելին,
 Եւ յայն համբուրէ ծերին լոյս ծագեաց մըթան գիշերին:

Խ Բ .

Աւա՛ղ, մեզ հայիլ պիտի յայն արեւն որ լոյս կու ծագէ.
 Շատ կայ ի յարեւ նըման, ի պընչէն օձըն կու վագէ.
 Գիտուն մարդն յարեւ նըման, խօսքըն լուս պայծառ կու ծագէ,
 'ի անգետ մարդն օձու նըման, հանապազ ըզմարդ կու խոցէ:

Խ Գ .

Մարդ կայ որ հազար արծէ, հազար կայ որ մէկ մի չարծէ:
 Այն մարդն որ հազար արծէ, անգետին մօտ մէկ մի չարծէ:
 Բազան ի յանտառ մորին՝ թեպետ բու, թեպետ բազայ է.
 ճուհարն ի ծովուն միջին՝ թեպետ քար թեպետ ճօհար է.
 Խելօքն ի յանգետն ի մօտ միտք արա՛ թէ ի՞նչ նըման է,
 Ճըրագն ի յառվել կարին կու վառի 'ի ինքըն չիգիտէ:
 Խելօքն է ի ծով նըման որ քանի չափես կու տանի.
 Անգետն է ի տիկ նըման, փարչ եւել լընուս նա պատռի:

Խ Դ .

Այս աստընւորիս բարիքն չէ մարդոյ իսկի մնացական.
 Աշխարհս է բարվան նըման, դասք մի գան ու դասք մի կ'երթան:
 Աշխարհս ի տօլապ նըման, որ ի վեր 'ւ ի վայր թաւալի.
 Վերինըն ի վայր դառնայ, եւ վարինն ի վեր թաւալի:
 Մըտիկ դու հիւսանն արա՛, որ թապութ, որրոց շինէ նա,
 Մէկըն գայ եւ մէկն երթայ, նայ իւր բան պակաս չիմընայ:

Խ Ե .

Աշխարհս է ոչինչ նըման, շատ դատին՝ դառնան փոշիման.
 Զալալ ու հարամ անեն՝ հոս թողուն 'ւ ի հոն կու գընան.
 Ջան արա՛ գործէ՛ բարի, որ յետոյ չլինիս փոշեման,
 Թէ չէ Ադամայ դրախտէն քեզ կանանչ տերեւ մի չիտան:

Խ Զ .

Աշխարհս է կանանչ մարգեր, մենք ի մէջն ենք կաթու ձագեր.
 Գըրօղն է եղեր բազա՛ կու գըրէ մէկ մէկ դար ի վեր: